ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

-64-

18.05.2018 թ.

ՀՀ Լոռու մարզպետ
պարոն՝ Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան
Ձեզ ենք տրամադրում ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու թիվ 09 , 10-Ա և համայնքի ղեկավարի թիվ 10 , 11 որոշումները :

Առդիր՝ 5 թերթ :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք, հասցե 1-ին փողոց 31/1,
Հեռախոս՝ 0255-6-06-04
Էլ.Փոստ՝ gogaran.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » Մայիսի 2018 թվականի N 09

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-030-0007-0035 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ԼԵՆԱ ՊԱՊԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով , ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասով , հիմք ընդունելով Լ. Հովհաննիսյանի ընտանիքի երկրաշարժի հետևանքով բնակարան կորցնելը , հողի բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 01.04.1991 թիվ 10 որոշումով Լենա Հովհաննիսյանին սեփականաշնորհված 06-030-0007-0035 ծածկագրի տակ գտնվող հողի վրա կառուցված համայնքային սեփականություն հանդիսացող 75.6 քմ մակերեսով բնակելի տունը , որում կառուցված օրվանից մինչ օրս բնակվում է Լ. Հովհանսյանը և համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Գոգարան համայնքի ավագանին որոշում է .

1.Համաձայնություն տալ Գոգարան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-030-0007-0035 ծածկագրի տակ գտնվող 75.6 քմ մակերեսով բնակելի տունը նվիրատվությամբ փոխանցելու Լենա Պապի Հովհաննիսյանին:

2.Լենա Հովհաննիսյանի հետ կնքել անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր :

Համայնքի ավագանու անդամներ	կողմ	դեմ	ձեռնպահ
ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ			
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ			
ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ			
ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ			
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ			

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ
(ստորագրություն) (անուն,ազգանուն)

Կ.Տ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք, հասցե գ Գոգարան,
հեռ.0255 6 06 04 էլ. փոստ՝ gogaran.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 15 » Մայիսի 2018 թվական, 10–Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի մայիսի 31 -ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Գոգարան համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 08-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Գոգարան համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի.
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ՝	Կողմ՝	Դեմ՝	Ձեռնպահ՝
ԳԱԼՈՅԱՆ ԳԱՐԻԿ			
ԳԱՍՊԱՐՅԱՆ ԼԵՎՈՆ			
ՀԱԼԱՋՅԱՆ ԵՂԻՇԵ			
ՄԱՐՈՒՔՅԱՆ ԿԱՐԵՆ			
ՆԻԿՈՂՈՍՅԱՆ ԱՆԻ			

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ԱՐԹՈՒՐ ԳԱԼՈՅԱՆ

Կ.Տ (ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Գոգարան համայնքի ավագանու
2018 թվականի Մայիսի 15- ի N 10-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈԳԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1.Անտոնյան Ավետիք Անաստասի– 30.0 հազար դրամ /սոց. օգնություն /
2.Աթոյան Դուրմիշ Ներսեսի – 10.0 հազար դրամ /սոց. օգնություն /
3.Սաֆարյան Մերուժան Վանուշի-10.0 հազար դրամ /սոց. օգնություն/
4.Կոնինյան Մարինե Վանիչկայի-40.0 հազար դրամ /սոց. օգնություն /

Գոգարան համայնքի ղեկավար՝ ---------- Արթուր Գալոյան
(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ -10-

15.05.2018թ. գ. Գոգարան

06-030-0007-0035 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Գոգարան համայնքի ավագանու 15.05.2018 թ. « Գոգարան համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող 06-030-0007-0035 ծածկագրի տակ գտնվող բնակելի տունը Լենա Պապի Հովհաննիսյանին նվիրատվությամբ փոխանցելուն համաձայնություն տալու մասին» թիվ 09 որոշումը՝

Որոշում եմ.

1.Լենա Հովհաննիսյանին անհատույց նվիրատվությամբ փոխանցել Գոգարան համայնքի 06-030-0007-0035 ծածկագրի տակ գտնվող 75.6 քմ մակերեսով բնակելի տունը :

2.Լենա Հովհաննիսյանի հետ կնքել նվիրատվության պայմանագիր:

3.Պետական գրանցման համար անհրաժեշտ ծախսերը իրականացնել Լ. Հովհաննիսյանի միջոցների հաշվին :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Գոգարան համայնք , գ. Գոգարան , հեռ. 0255 6 06 04

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 11

« 15 » Մայիսի 2018թ .

06-030-0007-0035 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ , հիմք ընդունելով անշարժ գույքի սեփականության / օգտագործման / իրավունքի գրանցման թիվ 2147613 վկայականը և Լ. Հովհաննիսյանի դիմումը՝

որոշում եմ.

1.Լ. Հովհաննիսյանին սեփականության իրավունքով պատկանող Գոգարան համայնքի 5-րդ փողոցի վրա գտնվող 06-030-0007-0035 կադաստրային ծածկագրով 0.173 հա մակերեսով տնամերձ հողամասին , դրա վրա գտնվող 06-030-0007-0035-1 կադաստրային ծածկագրով 75.6 քառ. մ մակերեսով տանը տրամադրել « գ. Գոգարան , 5-րդ փողոց , բնակելի տուն թիվ 9 » հասցեն :
2.Սույ որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման :

ԳՈԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԱԼՈՅԱՆ